



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԹՐԱԼԵՏԱՐԵՆԻ, բայու յեւկրնելի միացի է!

01 MAR 2007

Գ. Բ. Բ. Ք. № 1

5 FEB 2007

Հ. Ա. Խ. Հ.

# ՍԱՐՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔ)

Հ. Ա. Խ. Հ. Ասհմանակարյուն նոր բարգի  
փոփոխությունների ու լրացումների մասին  
ՀՈԴՎԱԾ Լ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻ

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ. Ա. Խ. Հ. Արքարքունություն Փազարքառ Կատարելով

342  
Հ-25

ԸՆԿՐԵԱԿԱՆ

1926 թ.

342  
2-25 Մր.

05 FEB 2017

Պայմանագիր, բայու յերկրների միացելի

Գ Ի Բ Ք № 1

Հ. Ա. Խ. Հ.

# ՍԱՐՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔ)

Հ. Ա. Խ. Հ. Սահմանադրություն նոր բնագրի  
փոփոխությունների ու լրացումների մասին  
ՀՈԴՎԱԾ Լ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻ

ՀԻ  
25-5

## ՀՐԱ.ՏԱ.ՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ. Ա. Խ. Հ. ԱՐԴՅՈՒՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԺԱՌԱՋԱՎԱՆ ԿՈՐԽՈՐԵՑ

ՀԱՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴԻ-  
ՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՓԱՓՈԽԱԽԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Խորհրդային Ի համագումարը 1922 թ. փետրվարի 2-ին ընդունում և հաստատում է Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրությունը (Հիմնական Որենքը), վորով ձեռքբառվում և Հոկտեմբերյան և Նոյեմբերյան հեղափոխությունների հիմնական քաղըբունքները և Հայաստանի Խորհրդային Իշխանության կանարունական մարմինների կառուցվածքը: Փետրվարի 2-ի Սահմանադրությունն արագողական և մեր պետականություն առաջին շրջանը:

Նույն 1922 թվականում Խորհրդային Հանրապետություններում առաջ և գալիս այդ հանրապետությունների դաշնակցության գաղափարն իրենց քաղաքական և տնտեսական շահերի տեսակետից:

Այդ գաղափարն իրագործվում և իրական ձեզ գույքում և սահնում համապատասխան պայմանագրերով Անդրկովկասյան Հանրապետությունների վերաբերյալ՝ 1922 թ. գեկանմ. 13-ին, Անդրկովկասյան Խորհուրդների 1 համագումարում, իսկ բոլոր Խորհրդային Հանրապետությունների վերաբերյալ 1922 թ. գեկանմբերի 30-ին, Միության Խորհուրդների 1-ին համագումարում, վորոնց հիման վրա ստեղծվում են Անդրկովկասյան Ֆեդերատիվ Հանրապետությունը և Խորհրդային Հանրապետությունների Միությունն իրենց սահմանադրություններով (ընդունված են՝ Անդրկովկասյան Հանրապետության Սահմանադրությունը 1923 թ. 16-ին հունվարի, Խորհրդ-

1032

44

Հայութիքաֆի Առաջին Տպարան

Գրառեպիտ № 927, պատվեր № 4605, տիրամ 3000

Նային Միության Սահմանադրությունը 1923 թ. 6-ին  
հուլիսի).

Նոր պետական միավորները կազմուերազգում են  
այն հիմնական սկզբունքով, զոր խորհրդային ազ-  
գային հանրապետությունները հատուկ պայմանա-  
գրերով միանում և կազմում են նոր պետական միա-  
վորներ, վերջիններին հանձնարարելով իրենց գերիշ-  
իանության մի վորոշ ժամաց, այն չափով, վոր չափով  
այդ անհրաժեշտ և ապահովելու խորհրդային հանրա-  
պետությունների ինքնապաշտպանությունն ընդգեմ  
համաշխարհային հականեղափոխության և կազմակեր-  
պելու իրենց տնտեսությունը նոր հիմունքներով:

Խորհրդային Հանրապետությունների Միու-  
թյունների առաջ գալը ընականաբար անհրաժեշտու-  
թյուն եր առաջ բերում ազգային հանրապետություն-  
ների Սահմանադրությունները համաձայնեցնելու այդ  
Միությունների, Սահմանադրությանը, Այդ հիման  
վրա Հայաստանի Խորհուրդների IV համագումարը  
1925 թ. մարտ ամսին ընդունում և հաստատում ե  
տեր Սահմանադրության մի շարք փոփոխությունները,  
վար հետեւյալներն են.

Դլուխ 2 (հոդ. 14) ամբողջովին նոր եւ Այս  
գլխում ձևակերպված են Հայաստանի Հանրա-  
պետության Խորհրդային Հանրապետությունների  
Միությունների կազմի մեջ մտնելու նպատակները,  
այն եւ հկապիտակիստական ողակի հանդեպ մի ձա-  
կատ ստեղծելը և խորհրդային հանրապետություն-  
ների հետ սերտ ոշխատակցության հիման վրա սո-  
ցիալիստական շինարարությունը և ազգային դաշ-  
գացման աղատությունն ապահովելը:

Անդրկովկասի յերեք հանրապետությունները  
(Ազգային, Վրաստան և Հայաստան), իրեն իրավա-  
հականար ժամաներ, կազմում են Անդրկովկասայան Խոր-  
հրդային ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետու-

թյուն, իսկ վերջնիս միջոցով այդ հանրապետու-  
թյունները միանում են Ռուսաստանի, Ռւկրայինայի  
Բևոռուսիայի (իսկ հետագայում Թուրքմենստանի և  
Ռւզաբեկստանի) Խորհրդային Հանրապետություն-  
ների հետ և կազմում են մի պետություն—Խորհրդա-  
յին Սոցիալիստական Հանրապետությունների Միու-  
թյուն:

Գլուխ 3 (հոդ. հոդ. 15—20) բոլորովին նոր եւ  
Այսական աժմովիված են Խորհրդային Հանրապետու-  
թյունների միացման հիմնական սկզբունքները, վո-  
րոնք միաժամանակ լիովին մտնում են Անդրկովկաս-  
յան հանրապետության և Միություն Սահմանադրու-  
թյունների մեջ.

1) Վորոշվամ և ԽՍՀ Միության, ԱՍՖՍԾ Հան-  
րապետության գերիշխանական իրավունքների սահ-  
մանները.

2) Անդրկովկասայան Հանրապետությունը և ԽՍՀ  
Միությունը պարտավորվում են պահպանելու Հա-  
յաստանի Հանրապետության գերիշխանական իրա-  
վունքը.

3) Հայաստանի Հանրապետությունը իրավունք  
ունի, ըստ իր ցանկության, ամեն ժամանակ դուրս  
գալու Խորհրդային Հանրապետության բոլոր Միու-  
թյուններից.

4) Հայաստանի Հանրապետության քաղաքա-  
ցին ինքնըստինքյան բոլոր Խորհրդային Հանրապե-  
տությունների և նրանց Միությունների քաղաքացի  
յի հաշվում.

5) Ընդունելով, վար Հայաստանի Հանրապետու-  
թյան պետական լեզուն հայերեն եւ, միաժամանակ  
ընդգծվում եւ, վար ազգային փոքրամասնություններն  
ազգային կուլտուրայի ազգութ դարգացման և իրենց  
ժայրենի լեզվի գործածության լիակատար իրավունք  
են գոյեւում Հայաստանի Հանրապետության սահ-  
մաններում:

Այնուհետև զալիս են 4 (հին բանգրի 4 գլ.), 5 ու 6 (հին բնագ. 2 գլ.) և 7 զլ. (հին բն. 5 գլ.), վորոնք վերաբերում են Հանրապետության գերազույն մարմինների կառուցվածքին ու իրավասության:

Այս գլուխները համեմատաբար քիչ են փոփոխված, բացի 4 րդ գլխի 21 հոդվածից (հին բնագրի 37 հոդ.), ուր ամփոփված են Խորհուրդների Հանրապետական համագումարի և Կինտագործկոմի իրավասության վերաբերյալ խնդիրները: Այս հոդվածից դուրս են թողնված մի շարք հիմնական խնդիրներ (արտաքին քաղաքականության, քաղաքացիական, զինվորական գործերի վերաբերյալ և այլն), վորոնք վերապետած են Խորհրդային Հանրապետությունների Միության գերազույն մարմինների իրավասությանը:

Կարենվ փոփոխության և յենթարկված նաև 5 գլխի 24-րդ հոդվածը (հին բնագրի գլ. 2, հոդ. 15), վորի համաձայն Հայաստանի Խորհուրդների Համագումարի ներկայացուցության նորման և Խորհուրդներից՝ 600 ընտրողին մի պատղամավոր, զավառական համագումարներից՝ 3,000 բնակչին մի պատղամավոր, փոխանակ 5,000-ի՝ ըստ 12 հոդ. հին բնագրի:

Մեծ փոփոխությունների և յենթարկվել հին բնագրի յերրորդ գլուխը (Փողովրդական Կոմիսարների Խորհրդագլ)։ Այս գլուխը նոր բնագրում վեր և ածված յերկու գլխի՝ 8 (Փողովրդական Կոմիսարների Խորհուրդ) և 9 գլուխների (ՀՍԽ Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների մասին):

8-րդ գլխում ձեւակերպված և Փողովրդական Կոմիսարների Խորհրդի կազմը, վոր ըստ նոր բնագրի (հոդ. 53) բաղկացած ե, բացի նախագահից և աելակալներից, 12 անդամից վճռողական ձեյնով (Փողովրդական Կոմիսարներից և կենտրոնական հիմնարկությունների պետերից): Էստ հին բնագրի (հոդ. 31) ժողովրդական Կոմիսարիատների թիվը, վորոնց

զեկավարները վճռողական ձայնով մանում ենին ժողովրդական Կոմիսարների Խորհրդի մեջ, համառում եր 16-ի: Ըստ նոր բնագրի այդ թվից 6 կոմիսարիատ դուրս են հանված՝ մեկը (Պարենավորման Ժողկոմատ) բալորովին վերացված ե, իսկ մյուսները (Արտգործողկոմ, Արտառժողկոմ, Թաղաժական, Փոստ-հեռագրական և Հաղորդակցության ձանապարհների ժողկոմատները) շնորհիվ այն հանգամանքի, վոր համաձայն Խորհրդային Հանրապետությունների Միության Սահմանադրության (հոդ. 11) այդ ժողկոմատները ձուլվում են միութենական մասշտաբով, վերանում են Հանրապետական այդ անվան ժողկոմատները զաշնակից հանրապետություններում, ուր կարող են լինել միայն նրանց լիազորները: Միենալոյն ժամանակ ժողկոմիսորնի կազմի մեջ մանում են յերկու կենտրոնական հիմնարկությունների պետեր (Ներքին Առաքորդական և Արտգործական Կոմիսարների Հայաստանի լիազոր և Արտակարգ Հանձնաժողովի նախագահը) ժողովրդական Կոմիսարների իրավունքով ու լրիվ կազմ և ստացվում նախագահ, յերկու տեղակալ և 12 անդամ (ժողովրդական կոմիսարներ):

Սույն գլխում մացրած և նաև բոլորովին նոր հոդված՝ 59, այն մասին, վոր Փաղկոմիսորնին առնելիք, իրեն նրա հանձնաժողով, կազմվում և Տնտեսական Խորհրդակցություն, վոր Հանրապետության անտեսական քաղաքականության և տնտեսական որդանների զեկավար մարմինն ե:

Զ-րդ գլխում ձեւակերպված են ժողովրդական Կոմիսարիատի կանոնադրության հիմնական սկզբունքները՝ կառուցվածքի և իրավասության վերաբերմամբ: Ըստ եյտթյան այս գլխումը հին բնագրի յերրորդ գլխի մի քանի հոդվածների պարզացումն ե, բացի այդ գլխի՝ 61-րդ հոնվածից, վոր բոլորովին նոր և համաձայն եԱԽ Միության և ԱՍԽ Հանրապետության Սահմա-

նադրություններին, Հայաստանի Հանրապետության ժողովրդական կոմիսարիատները քաժանում են յերկու կատեգորիայի՝ միացյալ և վոչ միացյալ ժողովրդական կոմիսարիատների։ Առաջին կատեգորիային դատկանում են՝ ԲԴ Տեսչություն, Աշխաղողկամատ, Ֆինժողկոմատ և Ժողտնտիորհ, վորոնք անմիջականորեն յեթակա լինելով Հայաստանի Հանրապետության գերազույն մարմիններին՝ միևնույն ժամակ իրենց գործունեյության ընթացքում պետք են զեկավարվեն Անդրկովկասյան Միության համանման ժողկոմատների գիրեկտիվներով։ Յերկրորդ կատեգորիային պատկանում են՝ Ներգործողություն և Հողժողկոմատ, Հողժողկոմատ, Առջժողկոմատ, Առժողկոմատ և Սոցապեղողկոմատ, վորոնք անմիջանակարեն, յենթակա յեն Հայաստանի Հանրապետության գերազույն մարմիններին և զեկավարվում են նըանց գիրեկտիվներով։ Այս գլխում ավելի ճշտված են ժողովրդական կոմիսարի և նրա առընթեր գործող կոլեգիայի իրավատությունը և փոխարարեկրությունները։

Առաջանք են այն հիմնական փոփոխությունները, վոր ընդունել և հաստատել են Հայաստանի Խորհրդների IV համագումարը, հանձնարարելով միաժամանակ կենտրոնական Գործադիր Կոմիտեին վերամշակել հին բնագրի վեցերորդ գույքը (տեղական իշխանության մասին) այն ուղղությամբ, վոր աշխատավոր մասսաների մասնակցությունը խորհուրդների մարմիններում ընդլայնվի, վոր ավելի և ճշտվեն ուղարգվեն տեղական մարմինների իրավատության սահմանները և վոր հնարավոր լինի գավառական կենտրոններում Քաղխորհուրդներ ստեղծելու։

Կենտգործկոմի նախագահությունը, զեկավարվելով IV համագումարի հիշտալ գիրեկտիվներով, վերամշակել են մեր Սահմանադրության մյուս գլուխուներն ու մտցրել կենտգործկոմի քառական 3 վորմտր

նատաղրջանը, վորը և ընդունել են այդ փոփոխությունները։

Յեթե Խորհուրդների IV համագումարի մըացրած փոփոխությունների գլխավոր նպատակն եր համաձայնեցնել մեր Սահմանադրությունը Անդրկովկասյան Հանրապետության և Խորհրդ, Հանրապետությունների Միության սահմանադրությանը, ապա կենտգործոմի 3-րդ նոտաշրջանի ընդունած փոփոխությունները հետեւանք են մեր տնտեսական և քաղաքական կյանքի զարգացման։

Հեղափոխական օրինականության ամբացման նշանաբանը իրեն հետեւանք այդ զարգացման՝ խորհրդային իշխանության շինարարության վերջին շրջանի հիմնական խնդիրներից մեկն են զարձել։ Այդ նշանաբանը պահանջում եր իշխանության մասսայականացումը և պետական ապարատի պարզեցում։

Այդ սկզբունքներն առաջադրվում են վոչ միայն իրեն կոնկրետ անհիմքներ, այլ և իրեն հիմնական սկզբունքներ, վորոնք անհրաժեշտորեն պետք են էլեվակերպվելին մեր Սահմանադրության մեջ։

Այդ և պատճառը, վոր Խորհրդների IV համագումարը հանձնարարում են կենտգործկոմին առաջին հերթին վերամշակել մեր Սահմանադրության այն մասը, վոր վերաբերում են տեղական իշխանության ապարատի ստորին բջիջներին։

Սակայն կենտգործկոմի նախագահությունը, հաշվի առնելով յերկրի տնտեսական և քաղաքական կյանքի զարգացումը, IV համագումարից ստացած հանձնարարության շրջանակը լայնացնում եր նախաձեռնությամբ, վերամշակելով նաև ընտրական և բյուջեցի իրավունքը։ Անշուշտ տեղական իշխանության մարմինների մասայականացումը և պարզեցումը զբար եր առանց ընտրական իրավունքի մեջ համա-

պատասխան փոխօխություններ մտցնելու, նուժունավանդ, վոր այդ առթիվ արդեն որենսդրական կարգով Միության գերազույն մարմինների կողմից ձեզ վակերպված են խորհրդացյին ընտրական իրավունքի անհրաժեշտ փոխօխությունները մասսայականացման տևակետից:

Կենտգործկոմի Նախագահությունը, դեկավորվելով այդ սկզբունքներով, նախ ընդունում է հրազդակում և 1925 թ. 27 հոկտեմբերին մեր ընտրական իրավունքի վերաբերյալ հրահանգը և միտամտակ նախագծում է այդ հրահանգի հիմնական սկզբունքները մտցնել մեր Սահմանադրության մեջ: Այնուհետև գալիս երյուղինետային իրավունքը, վորոնելավեկերպված և հին ըանդրում ընդհանուր գծերով, վոչ այնքան պարզ և մանրամասն: Բացի զրանից եորհրդային Հանրուպետությունների Միության առաջ գալը անհրաժեշտորեն պահանջում եր համաձայնեցնել մեր ըյուջնատային իրավունքը այդ Միությունների բյուջետային իրավունքներին այն հիման վրա, վոր ստեղծվում է մի միութենական ըյուջ, վորի մեջ մտնում են, իբրև նրա բաղկացուցիչ մասեր, դաշնակից Հանրապետությունների ըյուջները:

Ահա այս յերեք հիմնական հարցերի շուրջն է, վոր կենտգործկոմի Նախագահությունը վերամշակում է մեր Սահմանադրության հին ընադիրը և իբրև նախագծեր ներկայացնում կենտգործկոմի III նոտաշրջանին ի ըննություն:

Այդ հարցերի հիմնական փոխօխությունները հետեւալներն են.

## I ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախկին 16 րդ գլուխը (անդական իշխանություն), ըստի մեջ ամփոփված եր վոչ սիստեմատիկ կերպով

տեղական իշխանության բոլոր մարմինների (սկսած գյուղխորհներից մինչև գավառային համագումարները) կտզմը, իրավասությունը և անելիքները, փոխարինվում է նոր ընագրի 10-րդ գլխով:

Այս գլխում արդեն յուրաքանչյուր անդական մարմինի վերաբերյալ նորմաներն առանձնացրած են և գրաշնորհիվ պարզ և զորոշակի յին գառնում տեղական մարմինների կազմը, իրավասությունն և իրար հետ ունեցած փոխհարաբերությունները: Այսպիս 10-րդ գլուխը բաղկացած է հետեւալ մասերից՝

- ա. Խորհուրդների համագումարների մասին,
- բ. Գործադիր կոմիտեի մասին,
- գ. Պատգամավորների խորհուրդների մասին,
- դ. Իշխանության նույղական մարմինների տեսչության վերաբերյալ խնդիրների մասին.

Առաջին մասի (համագումարների) վերաբերյալ մտցրած և յերկու հիմնական փոփոխություն. 1) Գավառային համագումարների ներկայացուցչության նորման իջեցրած և մեկ պատգամավոր տալիս են բնակչություն 300 հոգին, փոխանակ 500-ի. 2) Կենադարձկոմին վերապահվում է իրավունք բացառիկ գեղագիրություն փոփոխելու գավառային և գավառակային համագումարների ներկայացուցչության նորմաները:

Յերկրորդ մասի վերաբերյալ (գործադիր կոմիտեների մասին) կարելու փոփոխությունն այն է, վոր ավելի զորոշակի յև ձեղակերպված այդ մարմինների իրավասությունը և փոխհարաբերությունները վերադարձ մարմինների հետ:

Յերրորդ մասի (պատգամավորների խորհուրդների) վերաբերյալ կառևոր փոփոխությունն այն է, վոր ներկայացուցչության նորմաները իջեցրած են՝ 1) 1000 հոգի բնակություն ունեցող քաղաքներում և քաղաքատիպ վայրերում 15 ընտրողին մեկ պատգամավոր. սակայն այդ նորման բարձրանում և բաղմա-

մարդ բնակչությունը ունեցող վայրերում, որինտե՛ 50,000 բնակչություն ունեցող վայրերում միայն 100 ընտառագին և գալիս մեկ պատգամավոր: Հին բնագրով բոլոր քաղաքներում բնակչության 500 հզին տալիս եր մեկ պատգամավոր: Գյուղերի վերաբերյալ նախկին նորման՝ 100 հոգուն մի պատգամավոր, իջեցրած և կիսով չափ, այսինքն 50 հոգին տալիս և մեկ պատգամավոր (հոդ. 77):

2. Թե քաղխորհուրդները և թե գյուղխորհուրդները կենտգործկոմի վորոշած հիմունքներով կարող են ունենալ իրենց գործադիր մարմինները: Հին բնագրով շաղկորհուրդները գործ սէիր մարմիններ չունեյին և այդպիսին հանդիսանում եյին գավգործկոմները: Ներկայումս քաղխորհոդի նախագահությունը նրա գործադիր մարմինն և, վորն իր աշխատանքները կատարում են միայն գավգործկոմի տեխնիքութեան ապահովությունը: Գյուղխորհուրդների վերաբերյալ մըացըրած և այն գրփոխությունը, վոր նրանք կարող են ունենալ, կենտգործկոմի վորոշմամբ, փոխանակ մեկ սահմագաճի, նախագահություն՝ գործադիր կոմիտեյի ֆունկցիաներով, յեթե այդ պահանջվում է գյուղի աշխատանքները հաջող կատարելու տեսակետից:

Չորրորդ մասը կարեօր և այն տեսակետից, վոր կոնկրետ և պարզ կերպով վորոշում և տեղական իշխանության մարմինների յուրաքանչյուրի անելիքները և իրավասությունը:

Ամփոփելով 10-րդ գլուխից, պետք և շեշտել, վոր այսաեղ ձեվակերպված են միայն այն հիմնական ըստկրունքները, վոր վերաբերում են տեղական մարմիններին, իսկ մանրամասն՝ ձեվակերպումը նրանց անելիքների և իրավասության՝ զետեղված են այդ մարմինների հատուկ կանոնադրությունների մեջ, վորոնք ընդունված և հաստատված են Հանրապետության որևէնսպիր մարմինների կողմից (գյուղխորհուրդ-

ների կանոնադրությունը 1925 թ. 16 փետրվարի, գավառակային համագումարի և գործկոմի կանոնադրությունը՝ 1925 թ. 16 մարտի, գավառային համագումարի և գործկոմի կանոնադրությունը 1925 թ. 16 ապրիլի և քաղխորհուրդների կանոնադրությունը 1925 թ. 22 գեկտեմբերի): Ծնորհիվ սահմանադրության այս փոփոխությունների և հաստատված կանոնադրությունների, տեղական մարմիններն ստացել են իրենց լրիվ իրավական դեմքը, վոր կանոնավորել և հեշտացրել և թե նրանց գործունեյությունը և թե նրանց դեկավարությունը վերագաս մարմինների կողմից: Հին բնագրի 7-րդ գլուխից՝ խորհուրդների, համագումարների և գործադիր կ միտեների անդամների պարտականությունների մասին, ամրողնովին դուրս և գցված, վորովհետև այդ մասին մանրամասն ասված և համապատասխան կանոնադրություններում:

## II. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՍԱՄԻՆ ԳԼՈՒԽԻ 11

Այս գլուխում ձեվակերպված են խորհրդային ընտրական իրավունքի հիմնական սկզբունքները, վոր բոլորովին զերծ լինելով մանր-բուրժուական զեմոկրատիզմից, պետական կառ գործության մեջ մասնակցություն ունենալու իրավունքը վերապահում և միայն հանրության աշխատանքով ապրուստի միջոցները ձեռք բերողներին:

Հին բնագրի հետ համեմատած, նոր բնագրի մեջ մտցրած են համարյա թե ըոլոր հոդվածների վերաբերյալ գլխավորապես խմբագրական փոփոխություններ: Վորոնք գալիք չափով պարզեցնում են այդ հոդվածները՝ իմաստի և իրավական ձեվակերպման տեսակետից:

Հիմնական փոփոխություն կազմում և 85 հոդը բարորդ ծանոթությունը, վորով ընտրական իրա-

վունք և վերապահվում Հայաստանում Խորհրդային Միության բոլոր քաղաքացիներին և ռատար, վոչ խռո-  
հըրդային յերկրներից Հայաստանում գտնվող աշխա-  
տավորներին:

Ամենահիմնական փոփոխությունը կազմում է ընտ-  
րական նորմաների իջեցումը, վորը հնարավորու-  
թյուն և տալիս աշխատավորության լայն մասսանե-  
րին մասնակցություն ունենալու պետական կառա-  
վարչության մեջ, վորոնց մասին մենք հիշատակե-  
ցինք կենտրոնական և տեղական մարմինների կա-  
ռուցվածքի մասին խոսելիս:

### III. ԲՅՈՒԴՁԵՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Բյուզին պետության յել և մուտքի նախահաշիվն  
ե, վորը արտահայտելով յերկրի անտեսական դրու-  
թյունը, միաժամանակ հիմք և ծառայում նրա ապա-  
դա անտեսական և կրուտուրական զարգացման: Բյուզ-  
ին միջոցով ե, վոր պետական իշխանությունն իրա-  
գործում է իր նպատակները ներքին և արտաքին  
քաղաքականության ասպարիզում: Խորհրդային բյուզ-  
ին կազմելու և գործադրելու հիմնական սկզբունք-  
ները ձեզակերպված են բյուզինքի իրավունքի մեջ:

Մեր սահմանադրության հին բնագրում այդ  
մասին կար 3 հոդված, վորոնք ավելի շուտ վերաբե-  
րում են բյուզինքի տեխնիքական հարցերին: Միայն  
նոր բնագիրն ե, վոր տալիս ե մեր բյուզինքի լրիվ և  
գորշակի կերպով ձեզակերպված սկզբունքները, վո-  
րոնք են:

1. Հայաստանի Հանրապետության բյուզինքն  
բաժանվում է հանրապետական և տեղական բյուզ-  
իների:

2. Հանրապետական բյուզինքն, վոր միացնում  
է պետական ամբողջ յել և մուտքը, նախ քննության  
և առնվազ ժաղկումարհի կողմից և ապա հոգատա-  
վում ե կենտրոնական կողմից, վորից հետո նա իրեն  
քաղկացուցիչ մաս մտնում է Անդրկովկասյան Հան-

բազեառության բյուզինքի մեջ, իսկ զերջնիս միջո-  
ցով Խորհրդային հանրապետությունների Միության  
միասնական բյուզինքի վերաբերյալ հարցերը կար-  
դավորվում են Միութենական և Հանրապետական  
որենսդրությամբ:

3. Առանց բյուզինքի մեջ համապատասխան վարկ  
սահմանելու կամ առանց համապատասխան ունեսողիք  
մարմինների վորոշման չի կարելի կատարել և վոչ մի  
ծախս պետական գանձարանից: Միենաւյն ժամանակ  
բյուզինքում նշանակված ծախքերը պետք է կատար-  
վեն իրենց անմիջական նպատակի համար և նախա-  
հաշվով վարչված սահմաններում:

4. Տեղական բյուզինքն, վոր միացնում է իր մեջ  
տեղական ինչև և մուտքը, բնագրում և հաստատվում ե  
տեղական համագումարների կամ Գործադիք կամիաե-  
ների կողմից, հանրապետության կենտրոնական մար-  
մինների հակողության տակ:

5. Տեղական մարմիններին իրավունք և վերա-  
պահված մուտք ունենալ տեղական հարկային և վոչ  
հարկային աղբյուրներից:

Տեղակրոն բյուզինքի ստեղծվելը հիմք է ծառա-  
յամ իշխանության տեղական մարմինների առաջ-  
ացման և ամրացման:

Կենտրոնական հանձնարարությունը՝ ա. թ. մայիս  
տմօնին ընդունելով վերակում հիշատակված հիմնական  
փոփոխությունները և լրացումները, վորոշում և հրա-  
տարակել Ս. Խ. Հանրապետության Սահմանադրու-  
թյունը նոր փոփոխություններով և լրացումներով և  
մինչույն ժամանակ հանձնարարությունը կենտրոնական  
համագանության, վերամշակել Սահմանադրության  
առաջին գլուխը՝ «Եահագործվող և աշխատավոր ժողո-  
վրդի իշխանության հիմնական սկզբունքները» և դրա  
հետ միասին սույն նախաշրջանում ընդունված փո-  
փոխությունները և լրացումները ներկայացնելու իրեն-  
քուրզում:

1. ՎԱՐԴԱՎԵՏՅԱՆ

## ՎՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 4 գումարան 3-րդ նշանաշխատքային ՀԱՅՀ Խորհրդների 4-րդ համագումարի վորոշման հիման վրա ՎՈՐՈՇՈՒՄ է.

1. Ը գումարի ՀԱՅՀ Խորհրդների 1-ին համազումարի 1922 թ. փետրվարի 2-ին ընդունած Սահմանադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը, վոր Ներկայաւորել և ՀԱՅՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Խախողակությունը և վոր Գերարդում և Սահմանադրության հետեւյալ գլուխներին. 10-րդ՝ Տեղական ժխտական թիւան մասին, 11-րդ՝ Խորհրդների ընտրության մասին և 12-րդ՝ Բնուղղեյի իրավունքի մասին:

2. Հանձնարարել Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահությանը վրամշակել Ստամանադրության 1-ին գումար՝ «Համագործվող աշխատավոր ժողովրդի իշխանության և իմնական սկզբունքները և ներկայացնել այն, ինչպես նաև սույն նշանաշխանի ընդունած բոլոր փակություններն ու լրացումնը ըստ ՀԱՅՀ խորհրդների առաջիկա 5-րդ համագումարին՝ ի հաստատություն,

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահ՝  
Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Քարտուղար՝  
1926 թ. Հունիսի 22.  
Ցիցան.

Հ. ՏԱՏԵԱՆ

ՀԱՅՍՈՍԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ՀԱՅՐԵԴԵՍՈՒԹՅԱՆ ՍԱՅՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ  
(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔ)

ՀԱՏՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԿԱԳՈՐԾՎՈՂ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԺՈՂՈՎՐԴԻ  
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆԵ-  
ՆԵՐԸ

1. Հայաստանի ապստամբ բանվորների և աշխատավոր գյուղացիների կամքով Հայաստանը 1920 թ. նոյեմբերի 29-ին հայտարարված և Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը.

Ամբողջ իշխանությունը կենտրոնում և տեղերում պատկանում են բանվորների, գյուղացիների և կարմիր զինվորների պատգամավորական խորհուրդներին:

2. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ՀԱՅՀ սահմաններում բոլոր աշխատավորներն առանց ազգության և դավանանքի բարության վայելում են հավասար իրավունքներ:

3. Սոցիալական կյանքի միակ հիմք ընդունելով աշխատանքը և բոլոր արժեքների ստեղծագործող նըկատելով աշխատավորին, աշխատանքը պարագայիր և հայտարարվում Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության քաղաքացիների համար, նշանարան ունենալով՝ «Ով չի աշխատի՝ նա չի ուտի»:

4. Հանդիսանալով միջազգային սոցիալիստական հեղափոխության մի հատվածը և կոչումն ունենալով



վերջ տալ կապիտալիստական կարգերին ու վերացնել  
մարդկային աշխատանքի ամեն տեսակ շահագործում,  
Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրա-  
պետության բանվորների և աշխատավորների իշխա-  
նությունը՝

ա) վերացված և հայտարարում հողի մասնավոր  
սեփականությունը Հայաստանի Սոցիալիստական Խոր-  
հրդային Հանրապետության սահմաններում և պե-  
տեկան սեփականություն և ճանաչում ամբողջ հողը  
բոլոր ջրերով, անտառներով և ընդերքով.

բ) արտագրավում և կալվածատերերի և կրոնա-  
կան հաստատությունների շարժական ու անշարժ գույ-  
շը և մշակելու համար տալիս և աշխատավորներին,  
նրանց կոլեկտիվներին և խորհրդային տնտեսու-  
թյուններին.

գ) արտագրավում և պետականացնում յերկա-  
թուղիները, բանկերը և ընդհանրապես խոշոր արտա-  
գրության բոլոր միջոցները, այս ամենի կառավարու-  
թյունն ու շահագործումը վերապահելով խորհրդային  
որդաններին կամ արտադրական միավորներին.

**ԾԱՆՈԹ. — Մասնավոր նախաձեռնության**  
վերապահված շրջանակը վորհշվում և ընթացիք  
որենսդրությամբ:

5. Բանվորների և աշխատավոր գյուղացիների  
հեղափոխական դիմումների իրականացման նպա-  
տակով՝

ա) իշխանությունն ամբողջովին և բացառապես  
վերապահվում և բանվորներին և գյուղացիներին և  
նրանց ընտրած մարմիններին.

բ) շահագործող դասակարգերը գրկում են ընդ-  
հանրապես քաղաքական իրավունքներից և հատկա-  
պես քաղաքական պաշտոնակալության իրավունքից:

6. Աշխատավորների քաղաքական դաստիարա-  
կության, մտավոր-բարոյական ազատության և դա-  
ստիարգային կազմակերպության նպատակով՝

ա) յեկեղեցին անջատվում և պետությունից,  
վերածվելով հավատացյալների մասնավոր համայնքի  
և դպրոցը՝ յեկեղեցուց, Բոլոր քաղաքացիներին իրա-  
վունք և արվում ազատորեն վարելու կրօնական և  
հակակրօնական պրոպագանդա: Դպրոցը դառնում է  
սոցիալիստական դաստիարակության որգան՝ կիրա-  
ռելով արտադրական աշխատանքը, վորպես կրթու-  
թյան միջոց.

բ) Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային  
Հանրապետության աշխատավորներին խոսքի ազա-  
տություն և մամուլի անկախություն իրապես ապահո-  
վելու համար՝ նրանց արածադրվում են նյութական,  
տեխնիքական և ալլ ամեն տեսակ միջոցներ.

գ) Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային  
Հանրապետության աշխատավորներին ժողովների, մի-  
տինդների, ցույցերի և այլ համախմբութների ազա-  
տությունն իրապես ապահովելու համար՝ նրանց արա-  
ծադրվում են ժողովատեղիներ, կահ-կարասիք, լու-  
սավորություն և վառելիք.

դ) Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային  
Հանրապետության աշխատավորներին իրապես միու-  
թյունների ազատությունն ապահովելու համար բան-  
գոր դասակարգին և գյուղացիության լիազես տրվում  
են նյութական և այլ ախսակի իրական միջոցներ.

ե) Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային  
Հանրապետության աշխատավորներին դիտություն  
ստանուլու գործն իրապես ապահովելու համար՝ բան-  
գոր գասակարգին և գյուղացիությանը տրվում են  
լիակատար, բազմակողմանի և ձրի կրթության բոլոր  
հնարագործությունները.

7. Պաշտպանելով միջազգային սոցիալիստական  
հեղափոխության շահերը և բոլոր յերկրների ու ժո-  
ղովուրդների աշխատավորների համերաշխության զա-  
գագարը՝

ա) Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սահմաններում ապրող բոլոր ուսարերկրացի աշխատավորներին տրվում և քաղաքացիության իրավունք և

բ) քաղաքական և կրոնական հարածանքի յենթակա բոլոր ստարերկրացիներին՝ ապահովություն և պաշտպանություն:

8. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունն ընդունելով քաղաքացիների իրավունքների հավասարությունը՝ առանց ցեղի և ազգության խրության, հանրապետության հիմական որենքների հակառակ և հայտարարում վորեհ առանձնաշնորհություն կամ առավելություն սահմանել կամ թույլ տալը, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների վորեե ճնշում կամ նրանց իրավահավասարության սահմանափակում:

9. Կեկավարվելով բանվոր դասակարգի շահերովն ընդհանուր առմամբ, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը զրկում է զատ զատ անհանց և խմբերին այն իրավունքից, վոր նրանք վայելում են ի վետ Սոցիալիստական Հանրապետության շահերի:

10. Վերացված են համարվում Հայաստանի նախկին կառավարությունների կնքած բոլոր միջազգային դաշինքները վճռականորեն մերժվում և վորեհ ազգային հարձակողական քաղաքականություն հարեան յերկրների ու ժողովրդների փերաբերմամբ, վերջ և տրվում գաղտնի դիվանագիտության և հաստատվում ու ամբապնդվում և հարեանների հետ բարեկամական դրացիություն:

11. Բանվորների և չունեվոր գյուղացիների գառակարգային հեղափոխական դիկտատուրան ապահովելու և արտաքինու ներքին հականեղափոխությունից պաշտպանելու նպատակով՝ կազմվում և Հայաս-

տանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության կարմիր Բանակը, բոլորի համար պարտադիր դարձնելով զինվորական ծառայությունը: Սոցիալիստական հայրենիքը զենքով պաշտպանելու պատվագոր իրավունքն ու կոչումը թողնելով միայն աշխատավորներին՝ չաշխատող տարրերի վրա զրվում են զինվորական այլ պարտականություններ:

12. Բուրժուական իրավակարգն ու արտադրությունն արմատախիլ անելու և պրոլետարիատի ու աղքատ գյուղացիության դիկտատուրան սահմանելու և պաշտպանելու համար՝ վերացվում են հականեղափոխական նախկին կառավարությունների բոլոր ուրենքներն ու գատարանները և փոխարեն՝

ա) Բանվորա-Գյուղացիական իրավունքի աղբյուր ձանաչվում և Խորհրդային Ռենսդրությունը, սոցիալիստական իրավահայեցողությունն և հեղափոխական խիզճը.

է) Արդարադատության հիմք ընդունվում և միասնական ժողովրդական Դատարանը՝ հիմնված աշխատավոր մասաների դասակարգային կազմակերպությունների վրա, միաժամանակ ճանաչելով արտակարգ արդարադատության անհրաժեշտությունը բանվորագյուղացիական հեղափոխության գերագույն շահերի պաշտպանության համար,

13. Բանվորների և աշխատավոր գյուղացիների գառակարգային դիկտատուրան, վոր կոչումն ունի վերջ տակ կապիտալիստական հանրակարգին, և հեղափոխական փոխարկմամբ իրականացնել սոցիալիզմը—վերջ և տալու նաև դասակարգերի գոյության, հետեւարար ամեն տեսակ դիկտատուրայի, այլ և քաղաքական իշխանության, վոր ծնունդ ու արտահայտությունն և դասակարգերի տիրապետության:

## ՀԱՏՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ 2.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՎԱՐԱՆ ՍՈ-  
ՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻՎ ԽՈՐՀՐԴՅՅԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՍՉՄԻ ՑԵՎ ԽՈՐՀՐԴՅ-  
ՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒ-  
ՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՄՏԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

14. Կապիտալիստական ողակի հանդեպ մի խոր-  
հըրդային ձակատ ստեղծելու և ըոլոր խորհրդային  
հանրապետությունների հետ սերտ յեղբայրական աշ-  
խատակցության հիման վրա սոցիալիստական շինու-  
առաջությունը և ազգային զարգացման ազատությու-  
նըն ապահովելու նպատակով՝ Հայաստանի Սոցիալիս-  
տական Խորհրդային Հանրապետությունը Վրաստա-  
նի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության  
և Աւգրեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրա-  
պետության հետ կազմում են Անդրկովկասյան Սո-  
ցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապե-  
տություն, իսկ վերջինիս միջոցով, վորպես նրա իրա-  
վահայասար մասը՝ միանում ե Ռուսաստանի Սոցիա-  
լիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետու-  
թյան, Բելոռուսիայի Սոցիալիստական Խորհրդային  
Հանրապետության, Ռւկրայնայի Սոցիալիստական  
Խորհրդային Հանրապետության, Թուրքմենստանի  
Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության և  
Ուզբեկստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրա-  
պետության հետ և կազմում են մի միացյալ պետու-  
թյուն՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետու-  
թյունների Միություն:

ԳԼՈՒԽ 3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԻԾԽԱՆԱԿԱՆ ԻՐԱ-  
ՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻ ԻԹԵՆԱԿԱՆ ԺԱՆԱԳԱԻՈՒ-  
ԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ**

15. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային  
Հանրապետության գերիշխանությունը սահմանա-  
փակված և միայն Անդրկովկասյան Սոցիալիստական  
Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության ուսանո-  
ւագրությամբ (Հիմնական Որենք) Խորհրդային ոո-  
ցիալիստական Հանրապետությունների Միության  
Սահմանադրությամբ (Հիմնական Որենք) մատնանըշ-  
ված սահմաններով և միայն Անդրկովկասյան Սոցիա-  
լիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետու-  
թյան և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետու-  
թյունների Միության իրավասության վերաբերյալ  
լնողիրների նկատմամբ:

Այս սահմաններից դուրս Հայաստանի Սոցիա-  
լիստական Խորհրդային Հանրապետությունն իր պե-  
տական իշխանությունն իրականացնում ե ինքնորի-  
նաբար.

Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ  
Խորհրդային Հանրապետությունը և Խորհրդային Սո-  
ցիալիստական Հանրապետությունների Միությունը  
պահպանում են Հայաստանի Սոցիալիստական Խոր-  
հրդային Հանրապետության գերիշխանական իրա-  
վունքները:

16. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային  
Հանրապետությունն իրեն իրավունք և վերապահուե  
ազատ դուրս գալու Անդրկովկասյան Սոցիալիստա-  
կան Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության

կազմից, նույնպես Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունից:

17. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սահմանները չեն կարող փոփոխության յենթ-րկվել առանց իր համաձայնության:

18. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության քաղաքացիների համար միութենական միամական քաղաքացիություն և սահմանվում: Հայաստանում Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի ինքնաշտիվ Խորհրդային Հանրապետության Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության և Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Միությունը:

19. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

20. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ազգային փոքրամասնություններն ազգային կուլտուրայի ազատ զարգացման և իրենց մայրենի լեզուն գործ ածելու իրավունք են վայելում համաձայն աշխատավոր ժողովրդի իշխանության հիմքունքների:

## ՀԱՏՎԱԾ ՅԵՐՐՈՐԴ

ԳԼՈՒԽ 4

ՀՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՅԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՇԽԱԿԻԹՅԱՆ ԳԵՐԱ-  
ԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

21. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության իրավասությանը, հանձին իր գերագույն մարմինների, այն եւ Բանվորների, Գյուղացիների և Կարմիր Զինվորների Պատգամավորական Խորհրդարդների Կոմիտեյի, յենթակա յեն՝

ա) Սահմանադրության հիմնական սկզբունքների հաստատությունը, լրացումն ու փոփոխությունը.

բ) Ներքին քաղաքականության ընդհանուր զեկավարությունը.

գ) Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության կազմի մեջ այլ հանրապետություններ ընդունելը, Հանրապետության սահմանների վորոշումն ու փոփոխությունը, այլև նրա սահերի, նաև Հանրապետությանը պատկանող իրավունքների ոտարացումը.

դ) Հանրապետության ընդհանուր վարչական բաժանումը և վարչական միավորների ներքին վերաբաժանումները.

ե) Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության իշխանության գերագույն մարմինների սահմանած միութենական ժողովրդական տնտեսության հիմունքների և ծրագրի իրագործումը՝ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սահմաններում: Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական տնտեսության ընդհանուր ծրագրը սահմանական լեզու:

զ) Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կողմից Հայաստանի անունից գերջիս սահմաններում գտնվող ձեռնարկությունների գերաբերմաքը Կոնքսիսիոն պայմանագրերի նախնական քննությունը: Հանրապետական նշանակություն ունեցող կոնցեսիոն պայմանագրերի հաստատությունը.

ը) Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության բյուջեյի սահմանումը.

թ) Միութենական և ֆեդերատիվ որենսոգրության համաձայն հարկեր ու տուրքեր սահմանելը.

ժ) Միութենական որենսդրության հիման վրա Դատարանակազմության, Դատավարության և Քաղաքացիական ու Քրեական Որենսդրության սահմանումը.

ի) Միութենական որենսդրության հիման վրա քաղաքացիության իրավունք տալը և այդ իրավունքից զրկելը, այլև այդ առթիվ վորոշումներ հրատարակելը Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սահմաններում.

լ) Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սահմաններում Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության դատական ու վարչական մարմինների կողմից դատապարտվածներին ընդհանուր ու մասնակի ներում, նաև նախկին վիճակի մեջ հաստատելը.

լլ) Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության վճակագրության կազմակերպելը,

ծ) Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեղերատիվ Խորհրդային Հանրապետության և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության իշխանության գերազույն մարմինների թույլատվությամբ արտաքին և ներքին փոխառություն կնքելը.

դ) Միութենական և ֆեղերատիվ ընդհանուր սկզբունքների հիման վրա Որենսդրություն սահմանելը հողաշխարարության, հողոգտագործման, այլև անտառների, ջրերի և յերկրի ընդերքի ոգտագործման վերաբերմաբ.

